«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

Ք.Երևան **29.08.2019թ.**

2019թ. օգոստոսի 29-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2020 ուստարվա անդրանիկ նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյանը, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Մ.Նանյանը, Ն.Եգորյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը և Լ.Յարիջանյանը (ուսանող):

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. Տնօրինական խորհրդի կազմի և աշխատանքային պլանի հաստատման մասին:

(Զեկուցող, Տնօրինական խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյան):

2. 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի հիմնախնդիրները և դիմորդների ընդունելության գործընթացի արդյունքների մասին:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

3. 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների մասին:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

4.2019-2020 ուստարվա ուսումնական պլանների հաստատում:

(Զեկուցող, ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

5. 2019-2020 ուստարվա հաստիքացուցակի քննարկում և հաստատում:

(Զեկուցող, ՄՌԿ և Ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան):

6. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ներքին իրավանորմատիվային փաստաթղթերի (վերանայված և նոր մշակված) փաթեթով հաստատելու մասին:

(Զեկուցող, ՄՌԿ և Ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալայն):

1. **Լսեցին.** Տնօրինական խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյանի ելույթը Տնօրինական խորհրդի կազմի և աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ:

Ողջունելով Խորհրդի անդամներին, Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ 2018-2019 ուստարվա Տնօրինական խորհրդի որոշմամբ ձևավորված աշխատանքային խումբը քոլեջի ներքին իրավանորմատիվային փաստաթղթերի վերանայման և մշակման աշխատանքների ընթացքում, ուսումնասիրությունների արդյունքում մշակել է մի շարք նոր փաստաթղթեր, այդ թվում նաև որոշ ստորաբաժանումների համար պանավորման նոր ձևաչափ (հնգամյա), որի գործողությունները համնկնում են արդեն իսկ գործող 2019-2024 թթ. ՌԶԾ-ի գործողությունների հետ (պլանի նախագիծը կցվում է): Շարունակելով ելույթը, նա ներկայարեց պլանի նոր ձևաչփը, նշեց նաև, որ ձևաչափը քննարվել և համաձայնեցվել է տնօրենի հետ: Ամփոփլով ելույթը, Լ.Հարությունյանը ասաց, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քոլեջում իրականացվող բարեփոխումների և որակի ապահովման գործընթացներում անմիջական մասնակցում են խորհրդի բոլոր անդամները, տնօրենի առաջարկությամբ խորհրդի կազմում փոփոխություններ չեն նախատեսվում, այն կմնա նույնը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել Տնօրինական խորհրդի աշխատանքային հնգամյա պլանի նախագիծը, իսկ խորհրդի կազմը թողնել անփոփոխ:
2. Հանձնարարել խորհրդի քարտուղար՝ Լ.Հարությունյանին պլանը նիստի ավարտից անմիջապես հետո ներկայցնել Տնօրենի վավերացմանը և տրամադրել խորհրդի ամնդամներին:

2. **Լսեցին՝** Քոլեջի ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանի ելույթը 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի հիմնախնդիրների և դիմորդների ընդունելության գործընթացի արդյունքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը ըստ հերթականությամբ ներկայացրեց 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի առաջնային աշխատանքները և հիմնախնդիրները.

1. Խիստ անհրաժեշտ է պահպանել ներքին կարգուկանոնի և աշխատանքային ռեժիմը:
2. Շարունակել աշխատանքները դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ:
3. Ընթացիկ ուստարում միջոցներ ձեռնարկել դասախոսական կազմի համար վերա-պատրաստումներ, սեմինարներ կազմակերպելու ուղղությամբ:
4. Ամբիոններում շարունակել բարելավել ուսումնամեթոդական աշխատանքները, որակի ապահովման տեսանկյունից ավելացնել փոխադարձ դասալսումները, տարատեսակ հարցումները:
5. Բարձրացնել ուսանողների հաճախումների վերահսկողությունը:
6. Շարունակել շենքային պայմանների և ուսումնական միջավայրի բարելավման աշխատանքները:

7. Գործարար հաղորդակցման, էթիկայի և ակադեմիական ազնվության կանոնների պահպանում, աշխատավայրում առողջ, բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- **Տնօրեն՝** Ի.Վարդանյանը հանգամանորեն խոսեց նշված հիմնախնդիրների վերաբերյալ, կարևորելով դրանցից յուրաքանչյուրը, այնուամենայնիվ նա առանձնացրեց առավել առաջնայինները. խիստ կարևոր է ներքին կարգուկանոնի և աշխատանքային ռեժիմի պահպանումը, սկսած տնօրենից մինչև մաքրուհի: Ամբիոնի վարիչները բարձր պատասխանատվությամբ պետք է նպաստեն դասավանդման որակի բարձրացմանը: Ի.Վարդանյանն առաջարկեց քոլեջում սովորողների նկատմամբ մեծ ուշադրություն ցուցաբերել, պահպանել խոսքի կուլտուրան, էթիկայի և դեոնտոլոգիայի կանոնները: Մեծ ուշադրություն է պետք դարձնել ուսման առաջադիմության, որակի և կարգապահության բարձրացմանը՝ դրսևորելով մանկավարժական վարպետություն, որին հասնելու համար անհրաժեշտ է մշտապես ապահովել մասնագիտական առաջընթացը, ինքնազարգացումը: Նա առաջարկեց հաճախակի կազմակերպել դասալսումներ, ուսուցողական բաց դասեր, մեծ ուշադրություն դարձնել դասավանդման նյութի յուրացմանը և ուսանողների գիտելիքների կարողությունների օբյեկտիվ գնահատմանը: Նա կարևորեց ուսումնամեթոդական նյութերի հարստացմանն ուղղված աշխատանքները, որոնք հնարավորություն կտան ապահովել յուրաքանչյուր պարապմունք ուսումնածրագրային, մեթոդական փաթեթով և անհրաժեշտ ռեսուրսներով: Նա նշեց, որ շենքային պայմանների և ուսումնական միջավայրի ուղղությամբ կատարվել են մեծ աշխատանքներ, մասնավորապես վերանորոգվել են 2 ուսումնական լսարան, ստեղծվել են 2 նոր լսարան:
- **Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝** Ն.Սահակյանն իր ելույթում ներկայացրեց 2019-2020 ուստարվա դիմորդների ընդունելության պլանը՝ նշելով, որ բավականին մեծ է եղել դիմորդների քանակը, կատարվել է ընդունելության պլանը՝ համաձայն ընդունելության կանոնակարգի՝ 20 ուսանող «Դեղագործություն» մասնագիտությամբ հիմնական ընդհանուր կրթություն, 20 ուսանող «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ հիմնական ընդհանուր կրթություն, 12 ուսանող «Քույրական գործ» մասնագիտությամբ հիմնական ընդհանուր կրթություն, 12 ուսանող «Դեղագործություն» մասնագիտությամբ միջնակարգ ընդհանուր կրթություն, (բոլորը վճարովի): Ցավոք եղել են նաև թափուր տեղեր:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Վերոհիշյալ հիմնախնդիրները ընդունել ի գիտություն և դարձնել ուղեցույց, առաջադրել «Կարգուկանոն», «Որակի բարձրացում» կարգախոսներով ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում:

2. 2019-2020 ուստարվա դիմորդների ընդունելության գործընթացի արդյունքները ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2019-2020 ուստարվա ուսումնական գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:

Նա ներկայացրեց 2019-2020 ուստարվա ուսումնական մասի և ամբիոնների հետ համատեղ իրականացված նախապատրաստական աշխատանքները, որի արդյունքում.

- Վերանայվել են ըստ մասնագիտությունների բոլոր ուսումնական պլանները ըստ ՊԿՉ-ների:
- Առկա են բոլոր 4 մասնագիտությունների և միջնակարգ և հիմնական ընդհանուր կրթության հիմքով ուսումնական պլանների նախագծերը, որոնք այսօրվա նիստով կներկայացվեն հաստաման:
- Ուսումնական պլաններով նախատեսված դասաժամերը հաշվարկվել են, տնօրենի հետ համաձայնեցվել և տրամադրվել ամբիոններին:
- Հաստատված ժամաբաշխման հիման վրա պատրաստվել է դասախոսների տարիֆիկացիայի նախագիծը:
- Ունենք 22 դասախոսներ, 5-ը համատեղողներ:
- Կազմվել են 9 ուսումնական խմբեր՝ 2 հանրակրթական, 7 մասնագիտական (Ուսումնական խմբերը ենթախմբրի չեն բաժանվում):
- Պատրաստվել է դասացուցակը՝ հարիր մոդուլային ուսուցմանը, դեռ անցած տարվանից իրականացվում է մոդուլային կարողություններին միտված ուսուցում «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ:
- Որպես նախասիրական մնացել է «Սպասարկման վարվելակերպ» առարկան:
- Բոլոր ուսումնական խմբերի համար նշանակվել են դասղեկներ:
- Վերանայվել են ամբիոնների կազմերը:
- Ուսումնական մասնաշենքն ու բոլոր ստորաբաժանումները մաքրությամբ, անհրաժեշտ կահավորմամբ պատրաստ են նոր ուսումնական տարվա մեկնարկին:
- Կատարվել են վերանորոգման աշխատանքներ, ստեղծվել են 2 նոր լսարան:
- Կազմվել է 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի առարկայական և մոդուլային պարտքերի մարման ժամանակացույցը (10.09.2019թ. – 10.10.2019թ.):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը, Լ.Հարությունյանը, Ա.Գյոզալյանը և Ն.Սահակյանը: Նրանք հավանություն հայտնեցին կատարված նախապատրաստական աշխատանքներին և համարեցին բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Նախապատրաստական աշխատանքները ընդունել ի գիտություն և համարել բավարար:

2. Հանձարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին ուստարվա վերջում ներկայցնել կատարողական զեկույց:

4. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը 2019-2020 ուստարվա ըստ մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների նախագծերի հաստատման վերաբերյալ:

Իր ելույթում նա նշեց, որ ուսումնական պլանների նախագծերը վերանայվել և լրամշակվել են 2019-2020 ուստարվա նախապատրաստական աշխատաքների ընթացքում, որին ակտիվ մասնակցել են նաև ամբիոնի վարիչները: Ամփոփելով ելույթը, նա ասեց, որ նախագծերը քննարկվել և երաշխավորվել է Քոլեջի Մանկավարժական խորհրդի կողմից (ուսումնական պլանների նախագծերը կցվում են):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ն. Եգորյանը և դասախոս՝ Մ.Նանյանը իրենց ելույթում նշեցին, որ ուսումական պլանների նախագծերը հանգամանորեն լսվել և քննարկվել են մանկավարժական խորհրդում և այն լիովին համապատասխանում են պետական կրթական չափորոշիչի բոլոր պահանջներին և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել 2019-2020 ուստարվա ըստ մասնագիտությունների ուսումնական պլանների նախագծերը:
2. Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյանին հանձարարել հաստատված ուսումնական պլանները տրամադրել մասնագիտական ամբիոններին:

5. **Լսեցին.** ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանի ելույթը 2019-2020 ուստարվա դասախոսական կազմի հաստիքացուցակի քննարկման և հաստատման վերաբերյալ:

ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանը նախ ողջունեց խորհրդի բոլոր անդամներին և հաջողություն մաղթեց նոր ուսումնական տարվան ընդառաջ, որից հետո հակիրճ ներկայացրեց 2019-2020 ուստարվա դասախոսական տարիֆիկցիայի հաստիքացուցակի նախագիծը: Նա նշեց, որ այս ուստարում դասախոսական կազմում գլոբալ կամ լուրջ փոփոխություններ չեն եղել: Ընդամենը երեք դասախոսներ ազատվել են աշխատանքից, նրանց փոխարեն ընդունել ենք համապատասխան դասախոսներ: Նա նշեց, որ հաստիքացուցակը համապատասխանում է ՀՀ ԿԳ նախարարարության կողմից ներկայացված միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակին: Ամփոփելով ելույթը, Ա.Գյոզալյանը ավելացրեց նաև, որ պլանավորվում է հաջորդ ուստարվանից մշակել քոլեջի ընդհանուր հաստիքացուցակի ձևաչափ (հաստիքացուցակի նախագիծը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել 2019-2020 ուստարվա հաստիքացուցակը և ներկայացնել Ընդհանուր ժողովի հաստատմանը:
2. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին նոր հաստատված հաստիքացուցակի մասին տեղեկացնել անձնակազմին:

6. **Լսեցին.** ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի ներքին իրավանորմատիվային փաստաթղթերի (վերանայված և նոր մշակված) փաթեթով հաստատելու վերաբերյալ:

Ա.Գյոզալյանը նախ ներկայացրեց վերանայված փաստաթղթերի փաթեթը, այդ թվում նաև Քոլեջի 2019-2024թթ. վերանայված նոր ՌԶԾ-ի նախագիծը, նշելով, որ բոլոր փաստաթղթերը քննարկվել են ստորաբաժանումներում, հաշվի են առնվել բոլոր առաջարկները և դիտարկումները (վերանայված փաստաթղթերի ցանկը կցվում է), որից հետո ներկայացրեց նոր մշակված փաստաթղթերը: Ամփոփելով ելույթը, նա նշեց, որ աշխատանքային խումբն իրականացրել է շատ լուրջ, ծավալուն և արդյունավետ աշխատանք խմբի ղեկավար Լ.Հարությունյանի գլխավորությամբ: Չմոռացավ նշել նաև ուսանողների կողմից կատարված աշխատանքները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը և տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը հավանություն հայտնեցին, տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը առաջարկեց հաստատել ներկայացված փաստաթղթերը 2 փաթեթով, որտեղ՝ առաջինում կլինեն վերանայված փաստաթղթերը, իսկ երկրորդում՝ նոր մշակված փաստաթղթերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Երաշխավորել Քոլեջի 2019-2024թթ. վերանայված ՌԶԾ-ի նախագիծը և ներկայացնել Քոլեջի Ընդհանուր ժողով հաստատման:
2. Հաստատել առաջին փաթեթը ամբողջությամբ (ցանկը կցվում է):
3. Հաստատել երկրորդ փաթեթը ամբողջությամբ (ցանկը կցվում է):
4. Հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանին հաստատված փաստաթղթերը ներկայացնել տնօրենին, վավերացնելու համար:
5. Վավերացված համապատասխան փաստաթղթերը տրամադրել ստորաբաժանում-ներին:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

Ք.Երևան **25.11.2019թ.**

2019թ. նոյեմբերի 25-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի հերթական նիստը: Նիստին ներկա էին խորհրդի նախագահ՝ Ի.Վարդանյանը, քարտուղար՝ Լ.Հարությունյանը, անդամներ՝ Մ.Նանյանը, Ն.Եգորյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը և Լ.Յարիջանյանը (ուսանող):

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը և դրվեց քվեարկության, որը միաձայն հաստատվեց:

1. Ուսումնական մասի 2018-2019 ուստարվա կատարողականի ներկայացման մասին:

(Զեկուցող, ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

2. Քոլեջի 2018-2019 ուստարվա գործունեության հաշվետվության ներկայացում:

(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

3. Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հաղորդում:

(Զեկուցող, ՈՆԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Լ.Հարությունյանի ելույթը՝ Ուսումնական մասի 2018-2019 ուստարվա կատարված աշխատանքների կատարողականի վերաբերյալ:

Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանը իր ելույթում նշեց, որ Քոլեջի ուսումնական մասը պլանով նախատեսված բոլոր աշխատանքները և միջոցառումները կատարել է ամբողջովին: Ելույթում հակիրճ ներկայացրեց այն աշխատանքները, որոնք կրում են շարունակական և պարբերական բնույթ, մասնավորապես՝

- Վերանայվել են 2018-2019 ուստարվա ըստ կրթական ծրագրերի բոլոր ուսումնական պլանները, համաձայն ՀՀ ԿԳ նախարարության կողմից ներկայացվող պահանջների:
- Ժամանակին վերանայվել են հանրակրթության և միջին մասնագիտական բոլոր

ծրագրերը, ըստ առարկաների:

- Դասախոսական կազմը համալվել է 4 դասախոսով, բոլոր ամբիոններում դասավանդող մանկավաժների հետ ժամանակին կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ, տարվել համապատասխան բացատրական աշխատանքներ:
- Վերանորոգվել է մեկ լսարան, լաբորատոր կաբինետները ժամանակին նախապատրաստվել են ուսումնական տարվա մեկնարկին:
- Կատարվել են ուսումնամեթոդական ռեսուրսների բարելավման աշխատաքները և այլն:

Ամփոփելով ելույթը, նա նշեց, որ 2018-2019 ուստարվա կատարված աշխատանքների ամբողջական կատարողականը աղյուսակներով և գծապատկերներով ներկացավել է տնօրենին և խորհրդի բոլոր անդամներին (կատարողականը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսանող՝ Լ.Յարիջանյանը իր ելութում նշեց, որ հաշվետու ուստարվա ուսումնական մասի աշխատանքների վերաբերյալ ուսանողները, հատկապես առաջին կուրսի, հայտնել են իրենց գոհունակությունը ամբիոնի վարիչներին և ուսանողական խորհրդի անդամներին՝ հանդիպման ժամանակ: Արդեն իսկ ավանդույթ դարձաց՝ սեպտեմբերի մեկին առաջին կուրսի ուսանողների հետ ուսանողական խորհուրդը հանդիպում և ներկայանում է քոլեջի կանոնները և առօրյան: Այնուամենայնիվ, ուսանողությունը բարձր է գնահատում ուսումնական մասի գործունեությունը, քանզի, ցանկացած խնդիր առաջանալու դեպքում, շատ արագ և օպերատիվ ստանում է լուծում:

Ամփոփելով ելույթը, Լ.Յարիջանյանը նշեց, որ ցավոք հաջորդ տարվա կատարողականի ներկայացմանը որպես ուսանող այլևս ներկա չի լինի խորհրդի կազմում (ավարտում է) և առաջարկեց նախապատրաստական աշխատանքների գնահատմանը մասնակից դարձնել նաև ուսանողներին, ստանալով կարծիքներ:

Քոլեջի տնօրեն Ի.Վարդանյանը, ամփոփելով ընթացիկ հարցը, հավելեց, որ ցավոք այս տարի ևս դիմրդների քանակը այդքան էլ մեծ չէ, այնուհանդերձ ուսումնական գործընթացում թերացումներ չեն արձանագրվել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատրված աշխատանքները գնահատել բավարար (հաշվետվությունը կցվում է):
2. Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյանին հանձնարարել հաջորդ ուստարվա կատարողականի հետ ներկայացնել ուսանողների շրջանում կատարված հարցումների արդյունքները:

2. **Լսեցին.** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը Քոլեջի գործունեության տարեկան հաշվետվության ներկայացման վերաբերյալ:

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն իր ելույթում ներկայացրեց Քոլեջի գործունեության 2018-2019 ուստարվա հաշվետվությունն ամփոփ տեսքով: Նա նշեց, որ հաշվետու տարում ինքն անձամբ է համակարգել, վերահսկել, հավաքագրել համապատասխան տեղեկատվությունը և վերլուծել: Քոլեջի գործունեության ամբողջական հաշվետվության կազմման աշխատանքներին մասնակցել են բոլոր ստորաբաժանումների ղեկավարները և պատասխանատուները: Կատարողականում ներառված են բոլոր հաշվետու ստորբաժանումների տարեկան կատարողականները, ըստ գործողությունների և արդյունքների: Հաշվետվությունը հակիրճ և ամփոփ ներկայացնելուց հետո Ն.Եգորյանը խոսեց մի քանի խնդիրների մասին, որոնք իրականացվել են մասնամբ և կամբողջացվեն ընթացիկ տարվա ավարտին: Ամփոփելով ելույթը, Ն.Եգորյանն ի տարբերություն նախորդ տարիների, ներկայացրեց քոլեջի գործունեության SWOT վերլուծությունը (տարեկան կատարողականը և SWOT վերլուծությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի 2018-2019 ուստարվա գործունեության կատարողականը գնահատել բավարար:
2. Հանձնարարել Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանին SWOT վերլուծության հիման վրա մշակել բարելավման ծրագիր:

3. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը Քոլեջում կրթության որակի ներքին ապահովման աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանն իր ելույթում նշեց, որ քոլեջում ակտիվ իրականացվում են որակի ապահովման գործընթացները, մասնավորապես՝

- Կազմակերպվել է հանդիպում-խորհրդատվություն ՀՖԿՍՊԻ-ի ՈԱ բաժնի ղեկավար Ա.Գյոզալյանի կողմից:
- Մշակվել է Քոլեջի ՈՆԱ ձեռնարկի նախագիծը, որն այժմ գտնվում է քննարկման փուլում:
- Քոլեջի երկու ներկայացուցիչ մասնակցել են 2019թ. հունիսին Աղվերանում ՀՖԿՍՊԻ-ի ՈԱ բաժնի կողմից կազմակերպված «ՈԱ ներբուհական համակարգի հիմնախնդիրները և մարտահրավերները» միջազգային աշխատաժողովին:
- Ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների մեկնարկով պայմանավորված նախատեսվում է 2020 թվականի մարտից ձևավորել համապատասխան աշխատանքային խմբեր:
- Աշխատանքներ են տարվում տեղական և միջազգային ՈԱ փորձագետների հետ խորհրդատվության նպատակով համագործակցության ընդլայնման ուղղությամբ:
- Մշակվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների պլան-ժամանակացույցի նախագիծը, որը որոշ ճշտումներից հետո կներկայացվի խորհրդի քննարկմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանը և Մ.Նանյանը իրենց ելույթում նշեցին, որ անհրաժեշտ է արագացնել խմբերի ձևավորման աշխատանքները և սկսել լրացնել ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության ձևաչափը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձարարել Ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանին Տնօրինական խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծության աշխատանքների իրականացման պլան-ժամանակացույցի նախագծի վերջնական տարբերակը:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

Ք.Երևան **21.01.2020թ.**

2020թ. հունվարի 21-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի հերթական նիստը: Նիստին, բացի նախագահ Ի.Վարդանյանից (նա գտնվում էր հերթական արձակուրդում), մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները՝ Մ.Նանյանը, Ա.Գյոզալյանը, Ն.Սահակյանը, Լ.Յարիջանյանը (ուսանող) և քարտուղար՝ Լ.Հարությունյանը, նիստը նախագահում էր տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանը:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահող Ն.Եգորյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը, որն էլ քվեարկությամբ միաձայն հաստատվեց:

1. 2019-2020 ուստարվա աշնանային կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):
2. Քոլեջի ներքին նորմատիվ իրավական ակտերի ընթացքի մասին:

   (Զեկուցող, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյան):
3. Քոլեջի ֆինանսատնտեսական հարցերի, նախորդ տարվա բյուջեի կատարողականի և ընթացիկ տարվա նախահաշվի կազմման մասին:

   (Զեկուցող, Հաշվապահ՝ Ա.Սարգսյան):
4. «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. ՌԶԾ-ի ընթացքի մասին:

   (Զեկուցող, ՈԱ պատասխանաու՝ Լ.Հարությունյան):

1. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի կատարողականի և 2-րդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ն.Եգորյանը նախ ողջունեց Խորհրդի նիստի բոլոր մասնակիցներին, որից հետո տեղեկացրեց 2019-2020 ուստարվա աշնանային կիսամյակի միջանկյալ, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին: Նա ներկայացրեց մի քանի գործողություններ, որոնք իրականացվել են, մասնավորապես՝ վերանայվել և լրամշակվել են միջանկյալ ատեստավորման քննական հարցաշարերն ու քննատոմսերը, նշանակվել և անցկացվել են քնություններ ընդհանուր և հատուկ մասնագիտկան մոդուլներից և առարկաներից:

Բոլոր քննությունները անցկացվել են ըստ վարման կարգի, ուսանողների կողմից գիտելիքների ստուգման և գնահտման վերաբերյալ բողոքներ չեն արձանագրվել:

Ինչ վերաբերվում է 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքի վերաբերյալ, նշեց, որ այս պահին պատրաստ է դասացուցակը և ժամանակացույցը: Ամբիոնի նիստերը ըստ պլանավորված ժամանակահատվածով կկայանան հունվարի 23-24-ը, որտեղ դասախոսները հաստատման կնրկայացնեն իրենց թեմատիկ պլանները, ուսումնական մասի վարիչը կպատրաստի 2-րդ կիսամյակի դասամատյանները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և կատարված աշխատնքները գնահատել բավարար:
2. Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին հանձնարարել կազմակերպել վերահսկողություն և արդյունքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել քոլեջի տնօրենին:

2. **Լսեցին՝** ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ՝ Ա.Գյոզալյանի ելույթը Քոլեջի ներքին նորմատիվ իրավական ակտերի ընթացքի վերաբերյալ:

Ողջունելով նիստի մասնակիցներին՝ Ա.Գյոզալյանը ներկայացրեց Տնօրինական խորհրդի ընթացիկ ուստարվա առաջին նիստով հաստատված ներքին նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն: Ելույթում առանձնացրեց մի քանի փաստաթղթեր, որոնք գործարկման մեջ են դրվելու 2020-2021 ուստարվանից: Այն բոլոր փաստաթղթերը, որոնք արդեն գործարկվում են, ընթացքը բավարար է, գործող ընթացակարգերի վերաբերյալ ներքին շահակլիցների շրջանում խնդիրներ չեն առաջացել: Որոշ դժվարություններ է առաջացել ՈԱ գործընթացներում, հիմնականում դա կապված է մանկավարժների (գործող բժիշկներ) խիստ զբաղվածության հետ, սակայն աստիճանաբար այդ խնդիրները կարգավորվում է: Ամփոփելով ելույթը, Ա.Գյոզալյանը նշեց, որ իհարկե բոլոր փաստաթղթերը դեռ նոր են գործարկվում, այնուամենայնիվ ուսումնական գործընթացին առնչվող բոլոր փաստաթղթերը շատ արդյունավետ են:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ա.Գյոզալյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Ա.Գյոզալյանին իրականացնել վերահսկողություն գործարկվող

ներքին նորմատիվ իրավական փաստաթղթերի կատարման և պահպանման ուղղությամբ:

3. **Լսեցին՝** Հաշվապահ՝ Ա.Սարգսյանի ելույթը Քոլեջի ֆինանսատնտեսական հարցերի, նախորդ տարվա բյուջեի կատարողականի և ընթացիկ տարվա նախահաշվի կազմման վերաբերյալ:

Ա.Սարգսյանը ներկայացրեց 2019թ. բյուջեի կատարողականը և նշեց, որ բյուջեով նախատեսված բոլոր ծախսերը կատարված են (հիմք՝ 2019թ. կատարողական): Հաջորդիվ, Ա.Սարգսյանը ներկայացրեց 2020 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը (2020 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը կցվում է), նշելով, որ այն 15%-ով պակաս է նախորդ տարվա բյուջեից: Հիմնական պատճառը դիմորդների թվի նվազումն է:

Ամփոփելով ելույթը, Ա.Սարգսյանը նշեց, որ 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի ուսման վարձերի գանձման ընթացքը և արդյունքները բավարար չեն, ուսանողների մեծ մասը պարտքեր ունեն, կան ուսանողներ, որոնք նույնիսկ ամբողջ կիսամյակի ուսման վարձի չափով պարտքեր են կուտակել: Նման պատկերը ֆինանսական առումով տագնապալի է և անհապաղ միջոցներ է պետք ձեռնարկել: Այնուհանդերձ, քոլեջի ղեկավարությունը նախատեսում է ֆինանսների խնայողության հաշվին հաջորդ ուստարում կատարել վերանորոգման աշխատանքներ: Ամփոփելով ելույթը, Ա.Սարգսյանը առաջարկեց այս հարցը ներկայացնել մոտակա մանկավարժական խորհրդի նիստում, և մասնագիտական ամբիոնների վարիչներին հանձանարարել համապատասխան քայլեր ձեռնարկել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ն.Եգորյանը իր ելույթում նշեց, որ այդ հարցը կբարձրացնի մանկավարժական խորհրդի մոտակա նիստում և արդյունքները կներկայացնեն Տնօրինական խորհրդի հաջորդ նիստում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Քոլեջի 2019 թվականի բյուջեի կատարողականը գնահատել բավարար:
2. Քոլեջի 2020 թվականի բյուջեի նախահաշվի նախագիծը երաշխավորել և ներկայացնել Քոլեջի Ընդհանուր ժողովի հաստատմանը:
3. Հանձնարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին Տնօրինական խորհրդի հաջորդ նիստում ներկայացնել ուսման վարձերի հավաքագրման վերաբերալ տեղեկատվություն:

4. Լսեցին՝ Ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանի ելույթը «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024 թվականների ռազմավարական զարգացման ծրագրի ընթացքի վերաբերյալ:

Լ.Հարությունյանը իր հանգամանալից և բովանդակային ելույթում ներկայացրեց «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2024թթ. Ռազմավարական զարգացման գործող ծրագրի ընթացքը, որը դեռ ընդամենը մի քանի ամիս է ինչ գործարկվում է: Առայժմ ծրագրի գործողությունների իրականացման պլան-ժամանակացույցով նախատեսված աշխատանքները իրականացվում են առանց որևէ խոչընդոտների:

Ամփոփելով ելույթը, Լ.Հարությունյանը նշեց, որ նախատեսվում է ներկայացնել տարեկան կատարողական զեկույց, համաձայն պլան-ժամանակացույցի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՈԱ պատասխանատու Լ.Հարությունյանի տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել Տնօրինական խորհրդի անդամներին ակտիվ մասնակցել գործող ՌԶԾ-ի գործողությունների իրականացմանը:

Նախագահ՝ /Ի.Վարդանյան/ Ն.Եգորյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

Ք.Երևան **20.03.2020թ**

2020թ. մարտի 20-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի արտահերթ հեռավար նիստ, տնօրինական խորհրդի բոլոր անդամների մասնակցությամբ՝ տնօրեն Ի.Վարդանյան, քարտուղար՝ Լ.Հարությունյան, անդամներ՝ Մ.Նանյան, Ն.Եգորյան, Ա.Գյոզալյան, Ն.Սահակյան և Լ.Յարիջանյան (ուսանող):

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրեն Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը՝

1. ՀՀ Կառավարության «ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին» 16.03.2020թ-ի N 298-Ն որոշման վերաբերյալ հաղորդում:
(Զեկուցող՝ տնօրեն Ի.Վարդանյան):

2. Գործող ուսումնական ծրագրերի վերանայման, դասաժամերի կատարողականի ներկայացման նոր ձևաթղթի մասին:
(Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

Նիստի մասնակիցների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջադրվեցին:

1. **Լսեցին՝** ՀՀ Կառավարության «ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին» 16.03.2020թ-ի N 298-Ն որոշման վերաբերյալ տնօրեն Ի.Վարդանյանի ելույթը:

Տնօրեն Ի.Վարդանյանը ներկայացրեց այն, որ հաշվի առնելով աշխարհում և ՀՀ նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածումը և այդ վարակն Առողջապահության համաշ-խարհային կազմակերպության (ԱՀԿ) գլխավոր տնօրենի՝ 2020 թվականի մարտի 13-ի

հայտարարությամբ որպես պանդեմիա որակելու հանգամանքը, ՀՀ կառավարությունը 16.03.2020թ-ի N 298-Ն որոշմամբ հայտարարել է արտակարգ դրություն: Հաշվի առնելով Հայաստանում տիրող արտակարգ դրության իրավաճակը, ուսումնական գործընթացը պետք է կազմակերպել անխափան: Նրա խոսքով, պետք է հնարավորության սահմաններում այս խնդրին շատ արագ լուծում տալ և ապահովել յուրաքանչյուր ուսանողի կրթության շարունակականությունն այլընտրանքային մոտեցումներով: Հավելեց, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժ.Անդրեասյանի 18.03.2020թ. №02/08.1/6735-20 գրության համաձայն այլընտրանքային ուսուցման մեթոդներից այս իրավիճակում միակ հնարավոր մեթոդը դարձել է հեռավար ուսուցումը: Ուստի, հաշվի առնելով երկրում ստեղծված իրավիճակը և կարևորելով ուսանողների կրթություն ստանալու անընդհատությունը, մեր Քոլեջը արդեն իսկ անցել է հեռավար ուսուցման:

Հիմք ընդունելով վերոհիշյալը, անհրաժեշտ է ցուցաբերել ճկունություն, վերապլանավորել մեր անելիքները, մշակել անհրաժեշտ ընթացակարգեր, իրականացնել կազմակերպչական և վերահսկողական գործառույթներ, օպերատիվ կերպով ուսումնական գործընթացը կազմակերպել անխափան և արդյունավետ: Քոլեջի տնօրինությունը պատրաստակամ է տրամադրել համապատասխան խորհրդատվություն և անհրաժեշտ աջակցություն, թե՛ դասախոսներին, և թե՛ ուսանողներին: Արտակարգ դրության պայմաններում այն դասախոսները, ովքեր տանը ունեն խնդիրներ կապված համացանցի կամ տեխնիկական միջոցների հետ, կարող են իրենց հեռավար դասերը իրականացնել Քոլեջից: Ելույթի վերջում Ի.Վարդանյանը առաջարկեց ուսումնական մասին սեղմ ժամկետներում ուսումնասիրել տեղական միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների փորձը և անհրաժետության դեպքում մշակել համապատասխան նորմատիվ ներքին ակտեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանն իր ելույթում նշեց, որ նման իրավիճակում քոլեջի ղեկավարության կողմից ամեն ինչ ձեռնարկվում է որպեսզի կարողանանք պատշաճ և բարձր մակարդակով հաղթահարենք այս մարտահրավերները: Բացի այդ նա հավելեց, որ պատրաստ է ցանկացած օր և ժամին պատասխանել յուրաքանչյուրին, տրամադրել անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն հուզող հարցերի վերաբերյալ: Ինչ վերաբերում է հեռավար ուսումնական գործընթացի կազմակեպման ներքոլեջային նորմատիվ

ակտերին, ապա հաջորդ նիստին կներկայացնենք անհրաժեշտ փաստաթղթերի նախագծերը:

2. Ուսանող՝ Լ.Յարիջանյանը ողջունելով խորհրդի բոլոր անդամներին, նշեց, որ շատ է ափսոսում այս իրավիճակի համար, քանի որ իր վերջին ուսումնական տարին պետք է ավարտի այս պայմաններում: Ինչևիցե, նա նշեց, որ ուսանողական խորհուրդը պատրաստ է իրականացնելու այն բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները, որոնք կտրվեն քոլեջի ղեկավարության կողմից:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն և հանձնարարել ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա.Գյոզալյանին կազմել համապատասխան հրաման, ներկայացնել տնօրենի վավերացմանը և տեղեկացնել բոլոր ամբիոնների վարիչներին:
2. Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին հանձնարարել անհապաղ հրավիրել մանկավարժական խորհրդի նիստ և քննարկել ուսումնական գործընթացը հեռավար (առանց) եղանակով անխափան կազմակերպելու հարցը:
3. Հաջորդ նիստը հրավիրել մեկ շաբաթ անց և ներկայացնել իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

2. **Լսեցին՝** Գործող ուսումնական ծրագրերի վերանայման, դասաժամերի կատարողականի ներկայացման նոր ձևաթղթի վերաբերյալ ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը:

Տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը նախ ներկայացրեց ԿԳՄՍ նախարարի տեղակալ՝ Ժ.Ադրեասյանի գրությունը, նշելով այն, որ մեկ շաբաթվա ընթացքում պետք է ներկայացնել Քոլեջի կողմից կազմակերպվող հեռավար ուսումնական գործընթացի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն: Հաշվի առնելով այդ հանգամանքը, անհրաժեշտ է հանձնարարել ամբիոնի վարիչներին սեղմ (4 օր) ժամկետում ուսումնական մաս նեկայացնել համապատասխան առաջարկներ, միջոցներ ձեռնարկել ուսանողների մասնացությունը հեռավար դասերին:

Ամփոփելով ելույթը, նա ներկայացրեց դասախոսների կողմից կատարված դասախոսությունների կատարողականի ներկայացման նոր ձևաթղթի նախագիծը: Նշելով, որ ներկա իրավիճակում դասախոսների վճարման խնդիրներից խուսափելու համար

անհրաժեշտ է ունենալ մի փաստաթուղթ, որը հիմք կծառայի յուրաքանչյուր դասախոսի փաստացի կատարողականով աշխատավարձի վճարման համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանն իր ելույթում նշեց, որ առաջարկվող ձևաչափը շատ մատչելի և հասկանալի է, որպես կատարողական ձևաթուղթ:
2. Դասախոս Հ.Գրիգորյանը ներկայացրեց մի հնարավոր իրավիճակ, որտեղ նույն առարկան ըստ դասացուցակի նախատեսված է առանձին օրերի և ժամերի, սակայն հեռավար դասախոսությունների ժամանակ հնարավոր է արդյոք մի քանի խումբ միացնել իրար և միասնական մեկ խմբով կազմակեպել դասը:
3. Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանը, պատասխանելով Հ.Գրիգորյանի կողմից բարձրացված հարցին, նշեց, որ կապ չունի մի խմբով են ուսանողները միանում թե ոչ, կատարողականը լրացվում է համաձայն դասացուցակի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել դասաժամերի կատարողականի ներկայացման նոր ձևաթուղթը:
2. Հանձնարարել Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին գալիք մանկավարժական խորհրդում ներկայացնել դասաժամերի կատարողականի ներկայացման նոր ձևաթուղթը և իրականացնել վերահսկողություն:
3. Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին. յուրաքանչյուր ուրբաթ տնօրենին զեկուցել իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

Ք.Երևան **30.03.2020թ.**

2020թ. մարտի 30-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի արտահերթ հեռավար նիստ՝ տնօրինական խորհրդի բոլոր անդամների մասնակցությամբ, նախագահ՝ Ի.Վարդանյան, քարտուղար՝ Լ.Հարությունյան, անդամներ՝ Մ.Նանյանը, Ն.Եգորյան, Ա.Գյոզալյան, Ն.Սահակյան և Լ.Յարիջանյան (ուսանող):

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը որտեղ ընդամենը երկու հարց է՝

1. ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի վիճակի մասին:

   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. «Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի նախագծի հաստատման մասին:

   (Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

Նիստի մասնակիցների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջադրվեցին:

1. **Լսեցին՝** ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում ուսումնական գործընթացի կազմակերպչական աշխատանքների և ընթացիկ վիճակի վերաբերյալ ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը:

Տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը ներկայացրեց երկրում ստեղծված իրավիճակը, որից ելնելով խիստ կարևոր է ապահովել ուսանողների կրթությունը: Շարունակելով ելույթը

Ն.Եգորյանը նշեց, որ Քոլեջը նույնպես տնօրենի հրամանով երկու շաբաթ է ինչ անցել է հեռավար ուսուցման: Ի պատիվ մեր դասախոսների, առանց որևէ դժվարության և խնդիրների բոլորն էլ պատրաստ են շարունակելու հեռավար ուսուցմամբ դասերը: Քոլեջի որոշ դասախոսներ մինչ այժմ, որպես լրացում լսարանային դասավանդմանը, այս կամ այն չափով կիրառում էին առցանց ուսուցման տարատեսակ գործիքներ:

Ն.Եգորյանը իր ելույթում ամփոփ ներկայացրեց կատարված կազմակերպչական աշխատանքները, այդ թվում.

1. Հենց սկզբից ուսումնական մասի կողմից կազմակերպվել է առցանց հանդիպումներ ուսանողների, ամբիոնի վարիչների և դասախոսների հետ, հստակեցվել են առաջիկա անելիքները: Միաժամանակ մշակվել է առցանց ուսուցման կազմակերպման ուղեցույցի նախագիծը, որն էլ քննարկվելու է մոտակա մանկավարժական խորհրդի նիստում:
2. Ըստ կուրսերի և խմբերի կազմավորվել են ֆեյսբուքյան, վայբերի և մեսինջերով խմբեր, որտեղ ընդգրկվել են տվյալ խմբի դասախոսները, կուրսղեկները, ուսումնական մասի վարիչ, ամենօրյա կապի, տեղեկություններին իրազեկվելու նպատակով և վերահսկողության համար: Այդ խմբերի և քոլեջի ֆեսյբուքյան էջի միջոցով առաջին մեկ շաբաթվա ընթացքում ուսանողությունը և դասախոսական կազմը տեղեկանում էր հաջորդ օրվա դասացուցակին և անելիքներին: Հիմնականում կատարվում է շաբաթական նախատեսված ծանրաբեռնվածությունը: Ուսումնական մասը արդեն վերանայել, կարգավորել և հստակեցրել է դասացուցակը, որով էլ առաջնորդվելու են: Հիմնականում նույն դասացուցակն է, որը հաստատվել էր կիսամյակի սկզբում, միայն փոփոխվել են դասավանդման ժամերը:

Ամփոփելով ելույթը, նշեց, որ մարտի 23-ին կայացած Մանկավարժական խորհրդի արտահերթ, հրատապ հեռավար նիստի ընթացքում քննարկվել են բոլոր հարցերը և տրված հանձնարարականները: Նշեց, որ բոլոր ամբիոնները տեղեկացվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալի գրության բովանդակությանը, Մանկավարժական խորհուրդը ևս որոշում է կայացրել առնվազն ամեն շաբաթ հեռավար ձևաչափով հանդիպել և ներկայացնել կատարված աշխտանքները, առաջացած խնդիրները և այլն: Նշեց նաև, որ մարտ ամսվա ընթացքում ամբիոնների կողմից կազմակերպված ուսումնական գործընթացում խնդիրներ չեն առաջացել, ուսումնական գործընթացը կազմակերպվել է համաձայն ուսումնական պլանի և դասացուցակի: Բոլոր դասախոսները, անխափան կազմակերպել են ըստ դասացուցակի բոլոր դասաժամերը: Ըստ պլանի, ներկայումս դեռ

իրականացվել են միայն դասախոսություններ, իսկ գործնական պարապմունքները կսկսվեն ապրիլի երկրորդ կեսին: Այն դասախոսները, ովքեր դեռ չեն ավարտել իրենց դասախոսությունները, կարող են ամփոփել ապրիլ ամսվա մեջ:

Ինչ վերաբերում է 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին, ապա այդ հարցը առաջարկեց քննարկել հաջորդ նիստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական մասի վարիչ (ՈԱ պատասխանատու) Լ.Հարությունյանն իր ելույթում նշեց, որ արտակարգ դրության իրավիճակում քոլեջի դասախոսական կազմը շատ ակտիվ և պատասխանատվությամբ է իրականացնում ուսումնական գործընթացը: Ընդհանուր առմամբ ամբիոնի վարիչների հետ գտնվում են կապի մեջ և պարբերաբար քննարկում առաջացած խնդիրները: Եզրափակելով իր խոսքը, Լ.Հարությունյանը հավելեց, որ բոլոր դասախոսները ևս ամբողջությամբ և լրջությամբ կազմակերպել են իրենց պլանով նախատեսված բոլոր դասախոսությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Արձանագրել, որ բավարար աշխատանքներ են կատարվել հեռավար ուսուցումը կազմակերպելու ընթացքն ապահովելու ուղղությամբ:
3. Հաջորդ նիստին ամբիոնների կողմից ներկայացնել առաջարկներ այս ընթացքի հետ կապված խնդիրների և նրանց լուծման վերաբերյալ:

2. **Լսեցին՝** Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը «Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի նախագծի հաստատման վերաբերյալ:

Լ.Հարությունյանն իր ելույթում ներկայացրեց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ՝ Ժ.Անդրեասյանի 18.03.2020թ. №02/08.1/6735-20 և դրան նախորդող գրությունները և նշեց, որ անհրաժեշտություն է առաջացել մշակել համապատասխան ներքին նորմատիվ փաստաթուղթ: Շարունակելով ելույթը Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ուսումնական մասի կողմից մշակվել է Քոլեջում «Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի նախագիծը: Այս փաստաթղթում հանգամանորեն ներկայացված է ինչպես անխափան կազմակերպել հեռավար ուսումնական գործընթացը (նախագիծը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Տնօրեն Ի.Վարդանյանը իր ելույթում տեղեկացրեց, որ հեռավար ուսուցման մեթոդը նոր մոտեցումներ է պահանջում, այդ իսկ պատճառով ներկայացված փաստաթուղթը իրոք կոգնի համակարգված և անխափան Քոլեջի կողմից ուսումնական գործընթացը կազմակերպել հեռավար ձևաչափով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել «Քոլեջում հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի նախագիծը (կցվում է):
2. 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակը կազմակերպել և անցկացնել՝ առաջնորդվելով հաստատված «Քոլեջում հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի:
3. Հաստատված կարգը հասանելի դարձնել շահակիցներին, այն տրամադրել բոլոր ամբիոնի վարիչներին:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6

Ք.Երևան **16.04.2020թ.**

2020թ. ապրիլի 16-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի արտահերթ հեռավար նիստ՝ տնօրինական խորհրդի բոլոր անդամների մասնակցությամբ, նախագահ՝ Ի.Վարդանյան, քարտուղար՝ Լ.Հարությունյան, անդամներ՝ Մ.Նանյան, Ն.Եգորյան, Ա.Գյոզալյան, Ն.Սահակյան և Լ.Յարիջանյան (ուսանող):

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը.

1. ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի վիճակի մասին:

(Զեկուցող՝ Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ Քոլեջի ուսանողների շրջանում անցկացված առցանց հարցումների արդյունքների ամփոփում:

(Զեկուցող, Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյան):

Նիստի մասնակիցների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջադրվեցին:

1. **Լսեցին՝** ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի ընթացիկ վիճակի վերաբերյալ Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանի ելույթը:

Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանը ներկայացրեց վերանայված դասացուցակները, որոնք համապատասխանեցվել են առցանց եղանակով բոլոր դասընթացների անխափան կերպով իրականացման համար: Ամբիոնների կողմից բոլոր դասերը տեսանկարահանվել են և արխիվացվում են բոլոր նյութերը:

Արտակարգ իրավիճակի պայմաններում բոլոր առարկաների շրջանակներում ձևավորվել են ուսանողական խմբեր դասախոսի և ուսանողի հեռավար կապի համար: Այդ նպատակով մեր քոլեջի դասախոսների կողմից օգտագործվում են հեռավար ուսուցմանը նպաստող ծրագրեր, որոնցից հիմնականում ZOOM, Google classroom, Microsoft հարթակները: Դասախոսների կողմից լայնորեն օգտագործվել են նաև էլեկտրոնային փոստային ծրագրերը և հեռավար կապը ապահովող տարբեր հավելվածները և սոցիալական ցանցերը (Messenger, Istagram, Viber, Skype, Facebook): Յուրաքանչյուր առարկայից ուսանողներին տրվել են բոլոր ուսումնական նյութերը (դասախոսություններ, գրականություն և այլ): Գործնական պարապումնքների ընթացքում, որոնք կատարվում են հիմնականում Zoom հարթակի միջոցով, փոփոխություններ է կատարվել դասավանդման մեթոդաբանության մեջ, որտեղ առարկայի առանձնահատկությունից ելնելով, քննարկվում է դասախոսության ժամանակ տրված նյութը, ուսումնասիրվել են դիդակտիկ նյութերը, կատարվել իրավիճակային խնդիրների լուծումներ, վիրտուալ հիվանդի ներկայացում, հարցումներ և այլն: Ուսանողներին տրվել են առաջադրանքներ, որոնց կատարումը վերահսկվել է դասախոսի կողմից: Նույնիսկ մեր դասախոսներից շատերը, դասից դուրս լրացուցիչ կազմակերպել և կազմակերպում են հեռավար հանդիպումներ ուսանողների հետ առանձին թեմաների քննարկման, ուսանողների ինքնուրույն աշխատանքների հանձնարարման և ստուգման վերաբերյալ:

Գարնանային կիսամյակում նախատեսված առաջին միջանկյալ ստուգումները հիմնականում անցկացվել են՝ բանավոր և գրավոր:

Տեղեկացրեց, որ ամբողջ ուսումնական գործընթացը հեռավար վերահսկվել է Ուսումնական մասի կողմից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ուսումնական մասի վարիչ՝ Լ.Հարությունյանը իր ելույթում նշեց, արտակարգ դրության իրավիճակում քոլեջի դասախոսական կազմը շատ ակտիվ և պատասխանատվությամբ է իրականացնում ուսումնական գործընթացը: Ընդհանուր առմամբ ամբիոնի վարիչների հետ կապը պահպանվում է, պարբերաբար քննարկում են առաջացած խնդիրները:

2. Ուսանող Լ.Յարիջանյանը իր ելույթում ներկայացրեց Ուսանողական խորհրդի 14.04.2020թ. նիստում քննարկված և որոշում ընդունած առաջարկը: Ելույթի վերջում, Լ.Յարիջանյանը հաստատեց ուսանողական խորհրդի պատրաստակամությունը աջակցել և նպաստել քոլեջում հեռավար եղանակով ուսումնական գործընթացի իրականացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումներն ընդունել ի գիտություն:
2. Արձանագրել, որ ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսուցման ուսումնական գործընթացը կազմակերպված է և ընթանում է բավարար:
3. Հանձնարարել Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին Ուսխորհրդի հետ համատեղ իրականացնել ուսումնական գործընթացի վերահսկողություն:

2. **Լսեցին՝** Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ Քոլեջի ուսանողների շրջանում անցկացված առցանց հարցումների արդյունքների վերաբերյալ Ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանի ելույթը:

Լ.Հարությունյանը իր ելույթում անդրադարձավ ս/թ մարտի 29-ից ապրիլի 12-ը տնօրենի հանձնարարությամբ ուսումնական մասի և ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ ավագ կուրսերի (2-րդ և 3-րդ) ուսանողների շրջանում (դեղագործ և ատամնատեխնիկական գործ մասնագիտություն) կազմակերպված հարցաթերթիկային առցանց հարցումների արդյունքներին: Ընդհանուր առմամբ հարցումներին մասնակիցների թիվը շատ գոհացուցիչ է, քանի որ 146 ուսանողներից մասնակցել են 105-ը: Հարցման արդյունքների վերլուծությունը և արված առաջարկությունները ներկայացվում են (հարցումների վերլուծությունը կցվում է):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսանող՝ Լ.Յարիջանյանը, իր ելույթում ողջունեց նման նախաձեռնությունը և առաջարկեց հարցումներ կազմակերպել ինչպես դասախոսների շրջանում, այնպես էլ առանձին դասընթացների վերաբերյալ, որի նպատակը կլինի բացահայտել և բարելավել դասախոսների կողմից կատարված աշխատանքների որակը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումներն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին և ուսանողական խորհրդի նախագահ՝ Լ.Յարիջանյանին մշակել և անցկացնել հարցումներ դասախոսների և դասընթացների արդյունավետության գնահատման վերաբերյալ:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 7

Ք.Երևան **21.05.2020թ.**

2020թ. մայիսի 21-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի արտահերթ ընդլայնված նիստ՝ խորհրդի բոլոր անդամների մասնակցությամբ, նախագահ՝ Ի.Վարդանյան, քարտուղար՝ Լ.Հարությունյան, անդամներ՝ Մ.Նանյան, Ն.Եգորյան, Ա.Գյոզալյան, Ն.Սահակյան և ուսանող՝ Ա.Խուդաթյանը (ուսանող Լ.Յարիջանյանի փոխարեն): Նիստին որպես հրավիրված մասնակցում էին ամբիոնի վարիչները:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը.

1. ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի վիճակի մասին:

   (Զեկուցող՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. Պետական ամփոփիչ ստուգման աշխատանքների մասին:

   (Զեկուցող՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

3. Ընդունելության աշխատանքների նախապատրաստման ընթացքի մասին:

   (Զեկուցող՝ Ընդունելության հանձնաժողովի պատ. քարտուղար՝ Ն.Սահակյան):

Նիստի մասնակիցների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջադրվեցին:

1. **Լսեցին՝** ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի ընթացիկ վիճակի վերաբերյալ Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանի ելույթը:

Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն իր ելույթում հակիրճ տեղեկացրեց, որ քոլեջում իրականացվող առցանց եղանակով ուսումնական

գործընթացում որևէ խնդիրներ և խոչընդոտներ չեն արձանագրվել: Արտակարգ դրության պայմաններում անձնակազմի բոլոր անդամները աշխատանքները հիմնականում կազմակերպել են տանից: Բացառիկ դեպքերում և խիստ անհրաժեշտությունից ելնելով տնօրինությունը և ուսումաօժանդակ կազմը քոլեջում իրականացրել է որոշակի աշխատանքներ: Ամփոփելով ելույթը Ն.Եգորյանը նշեց, որ անձամբ խնդրել է ամբիոնի վարիչներին մեծ ուշադրություն դարձնել ուսանողների մասնակցությանը դասերին: Ինչ վերաբերում է ուսումնական գործընթացի վերահսկողությանը, ապա նա նշեց, որ Ուսումնական մասի կողմից հեռավար ամբողջովին իրականացվել են:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումներն ընդունել ի գիտություն:
2. Արձանագրել, որ ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացը ընթացել է պատշաճ մակարդակով:

2. **Լսեցին՝** Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2019-2020 ուստարվա ափոփիչ ատեստավորման աշխատնքների վերաբերյալ:

Ն.Եգորյանն իր ելույթում տեղեկացրեց, որ Հայաստանում հայտարարված արտակարգ դրության պայմաններում պետական ամփոփիչ ստուգումները կազմակերպվելու են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18.05.2020թ. №08-Ն հրամանով հաստատված «ՀՀ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում 2020-2021 ուստարվա առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելության և 2019-2020 թվականի շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման» կարգի համաձայն: Բոլոր աշխատանքները ըստ քայլերի քննարկվել են և տրվել համապատասխան երաշխավորում մասնագետների կողմից:

Համաձայն կարգի 11-րդ կետի ժամանակին ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել պետական որակավորող հանձնաժողովի նախագահների թեկնածուների ցանկը: Կարգի 12-րդ կետի համաձայն մինչև մայիսի 25-ը պետք է նշանակվեն ուսանողների փոխադրման և ավարտական ստուգարքները: Գործընթացը կարգավորվում է սույն կարգի՝ 13-24րդ կետերով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

- ՈՒսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանը իր ելույթում հավելեց, որ ուսանողներին համաձայն գործող կարգի, ժամանակին տրամադրվել են անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն:
- Խորհրդի նախագահ Ի.Վարդանյանն առաջարկեց հունիսին ևս հրավիրել արտահերթ նիստ ամփոփելու իրականացված աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ուսումնական մասի կողմից իրականացված 2019-2020 ուստարվա պետական ամփոփիչ ստուգման աշխատանքները գնահատել բավարար:
2. Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին հաջորդ նիստին ներկայացնել տեղեկատվություն իրականացրած պետական ամփոփիչ ստուգումների վերաբերյալ:
3. Հանձնարարել Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանին պատրաստել համապատասխան հրամանները և ներկայացնել տնօրենին:

3. **Լսեցին՝** Ընդունելության հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ն.Սահակյանի ելույթը 2020-2021 ուստարվա ընդունելության աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ն.Սահակյանն իր ելույթում ևս անդրադարձավ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18.05.2020թ. №08-Ն հրամանով հաստատված «ՀՀ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում 2020-2021 ուստարվա առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելության և 2019-2020 թվականի շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման» կարգին:

Նա նշեց նաև, որ կապված համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում այս տարի որոշ դժվարություններ են առաջացել 2020-2021 ուստարվա դիմորդների ընդունելության մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման նպատակով իրականացվող աշխատանքներում: Այնուհանդերձ դիմորդների մասնագիտական կողմնորոշման աշխատանքներին ընդգրկած են եղել բոլոր ամբիոնների դասախոսները: Նրանք Քոլեջի գործունեության վերաբերյալ մանրամասն տեղեկատվությամբ փոքրիկ գովազդներ են պատրաստել և արդեն իսկ տեղադրել Facebook սոցիալական ցանցրի իրենց անձնական էջերում: Նույն աշխատանքները կատարվում է նաև ուսումնական մասի հետ համատեղ պրակտիկայի և կարիերայի պատասխանաուի կողմից: Էլեկտրոնային փոստի միջոցով ստացել ենք բազում նամակներ պարզաբանման պահանջով:

Ամփոփելով ելույթը, Ն.Սահակյանը առաջարկեց 2020-2021 ուստարվա տնօրինական խորհրդի առաջին նիստին ներկայացնել կատարողական զեկույց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Ն. Եգորյանը, ուսումնաման մասի վարիչ Լ. Հարությունյանը, ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ Ա. Գյոզալյանն իրենց ելույթներում դրական գնահատեցին Ն.Սահակյանի կողմից իրականացված դիմորդների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ կատարվող աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 2020-2021 ուստարվա ընդունելության նախապատրաստական աշխատանքները գնահատել բավարար:
2. 2020-2021 ուստարվա Տնօրինական խորհրդի անդրանիկ նիստում ներկայացնել նախապատրաստական աշխատանքների արդյունավետության վերաբերյալ տեղեկանք:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան

«ԳՐԻԳՈՐԻՍ» ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 8

Ք.Երևան **16.06.2020թ.**

2020թ. հունիսի 16-ին տեղի ունեցավ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի արտահերթ ընդլայնված նիստ՝ տնօրինական խորհրդի բոլոր անդամների մասնակցությամբ, նախագահ՝ Ի.Վարդանյան, քարտուղար՝ Լ.Հարությունյան, անդամներ՝ Մ.Նանյան, Ա.Գյոզալյան, Ն.Սահակյան, ուսանող՝ Ա.Խուդաթյանը, Ն.Եգորյանը նիստին մասնակցում էր հեռավար ձևաչափով: Նիստին որպես հրավիրված մասնակցում էին ամբիոնի վարիչները:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրինական խորհրդի նախագահ Ի.Վարդանյանը բացելով նիստը՝ ներկայացրեց օրակարգը.

1. ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի վիճակի մասին:

   (Զեկուցող՝ ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

2. 2019-2020 ուստարվա պետական ամփոփիչ ստուգման արդյունքների մասին:

   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

3. 2019-2020 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողներին հաջորդ կուրս փոխադրելու մասին:

   (Զեկուցող, ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյան):

Նիստի մասնակիցների կողմից օրակարգային այլ հարցեր չառաջադրվեցին:

1. **Լսեցին՝** ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսումնական գործընթացի ընթացիկ վիճակի վերաբերյալ Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանի ելույթը:

Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն իր ելույթում հակիրճ ներկայացրեց քոլեջում ուսումնական գործընթացի առցանց եղանակով իրականացված արդյունքները, որտեղ որևէ խնդիրներ և խոչընդոտներ չեն գրանցվել: Արտակարգ դրության պայմաններում ուսանողների ամառային քննաշրջանի գիտելիքների ստուգումները և գնահատումները իրականացվել են համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18.05.2020թ. №08-Ն հրամանով հաստատված «ՀՀ Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում 2020-2021 ուստարվա առկա (ստացիոնար) ուսուցմամբ ընդունելության և 2019-2020 թվականի շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման» կարգի: Ընդհանուր առմամբ 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում պլանավորված բոլոր աշխատանքները իրականացվել են:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Արձանագրել, որ ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պայմաններում քոլեջում հեռավար ուսուցման ուսումնական գործընթացը իրականացվել է պատշաճ մակարդակով:

2. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանի ելույթը 2019-2020 ուստարվա պետական ամփոփիչ ստուգման արդյունքների վերաբերյալ:

Ն.Եգորյանը տեղեկացրեց, որ ըստ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված կարգի ժամանակացույցին համապատասխան կազմակերպվել են Քոլեջում պետական ամփոփիչ ստուգումները: Անհրաժեշտ աշխատանքներում ներգրավված են եղել բոլոր մասնագիտական ամբիոնների դասախոսները և նրանց կողմից տրվել է համապատասխան երաշխավորումներ:

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրենի համապատասխան հրամաններով նշանակվել են «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2019-2020 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով կրթական ծրագրով շրջանավարտների պետական ամփոփիչ ստուգման հանձնաժողովի նախագահներ:

Տնօրենի հրամանով կազմվել են ստուգման հանձնաժողովները:

Երկրում արտակարգ դրության պատճառով ուսումնական գործընթացը անխափան կազմակերպելու և անցկացելու նպատակով, քոլեջի տնօրենի հանձնարարությամբ մշակվել և գործարկվել է «Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգը:

Եզրափակելով ելույթը, Ն.Եգորյանը հավելեց, որ պետական ամփոփիչ ստուգման վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը ներկայացված է հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում (հաշվետվությունը կցվում է):

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ուսումնական մասի վարիչ Լ.Հարությունյանին ուսումնասիրել հանձնաժողովների նախագահների առաջարկությունները և հաջորդ ուստարվա ընթացքում ներկայացնել բարելավման միջոցառումներ:

3. **Լսեցին՝** Ուսումնական գծով տնօրենի տեղակալ՝ Ն.Եգորյանի ելույթը 2019-2020 ուստարվա միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով ուսումնառող ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու վերաբերյալ:

Ուսումնական գծով տնօրենի տեղակալ Ն.Եգորյանն իր ելույթում ներկայացրեց 2019-2020 ուստարվա ուսումնական պլանները կատարած, դրական գնահատականներ ստացած միջնակարգ և հիմնական կրթության հիմքերով կրթական ծրագրով սովորող «Ատամնատեխնիկական գործ», «Դեղագործություն» և «Քույրական գործ» մասնագիտություններով ուսումնառողների ցանկը: Հանգամանորեն ներկայացրեց ըստ մասնագիտությունների դրական գնահատական ստացած ուսանողների ցուցակները:

Եզրափակելով ելույթը Ն.Եգորյանն առաջարկեց ցուցակում ներառված ուսանողներին փոխադրել հաջորդ կուրս:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաղորդումն ընդունել ի գիտություն:
2. Ցուցակում ներառված ուսանողներին փոխադրել հաջորդ կուրս, համապատասխանաբար:

Նախագահ՝ Ի.Վարդանյան

Քարտուղար՝ Լ.Հարությունյան